Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Փոքր Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքները և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացնում առանձին:
Մրցույթին կարող է մասնակցել ուսուցչի պաշտոնին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:
Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի
2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ
4) ինքնակենսագրություն (Ձև 5),
5)<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույքի պատճենը՝ առկայության դեպքում:
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատվում են պատճենների հետ, բնօրինակները վերադարձվում:
Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի նոյեմբերի 2-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}–ից 15^{00}, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի նոյեմբերի 17-ին՝ ժամը 14^{00}-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Փոքր Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոցում:
Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Փոքր Մասրիկ, 3-րդ փողոց, թիվ 11:
Տեղեկությունների համար զանգահարել 093898259 հեռախոսահամարով: